

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016թ. փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանը ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի Չարենցավանի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը (այսուհետ՝ ՍԱՏԳ) սոցիալական համագործակցության իրականացման աշխատանքները համակարգելու նպատակով՝ ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավանի տարածաշրջանում Համաձայնագրի կողմերն են Համաձայնագրին միացած սուբյեկտները՝ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինները, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, սոցիալական ծառայություններ տրամադրող այլ կազմակերպությունները, ինչպես նաև ֆիզիկական անձիք (միասին նաև՝ Կողմեր) ձևավորում են համակարգող խորհուրդ (այսուհետ՝ Խորհուրդ):

Խորհրդի կազմում պարտադիր ընդգրկվում են տարածաշրջանում գործող՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1061-Ն որոշման 1-ին կետով սահմանված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների մեկական ներկայացուցիչ, ինչպես նաև սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների ներկայացուցիչներ և ֆիզիկական անձինք:

Խորհուրդը գործում է խորհրդի անհատական կազմը ձևավորելուց հետո 2 տարի ժամկետով: Խորհրդի անհատական նոր կազմով գործունեությունը սկսվում է նախորդ կազմի գործունեության դադարման օրը:

Կողմերը իրենց առաջարկությունները, մինչև 2016թ. մայիսի 15-ը, Խորհրդի անդամության համար կարող են ներկայացնել Չարենցավանի ՍԱՏԳ (ք. Չարենցավան):

Հայտագրման համար ներկայացվող նվազագույն պահանջներն են. ա) սոցիալական աջակցության բնագավառում գործունեության փորձ, բ) սոցիալական ծառայություններ տրամադրման ծրագրերի իրականացումը: Գործընթացի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներառված է Տարածքային մակարդակով սոցիալական համակործակցության Համաձայնագրում, որը տրամադրվում է Սոցիալական համագործակցության Համաձայնագրին միացած Կողմերին:

ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի
Չարենցավանի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն